NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

6 մարտի 2017 թվականի N ՑԲ-003-03/17

ք. Երևան

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ 13,962,749 ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԲՈՐՍԱՅԻ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (A) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2017 թվականի փետրվարի 16-ի հայտը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 13,962,749 (տասներեք միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քառասունինը) հատ սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակելու և Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակ ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 3-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 5-րդ գլխի դրույթներով, 9-րդ գլխի 50 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 13,962,749 (տասներեք միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար յոթ հարյուր քառասունինը) հատ լրացուցիչ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակել և ընդգրկել Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում՝ միաժամանակ թույլատրելով դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ Բորսայի բաժնետոմսերի հիմնական (A) ցուցակում համարվում են ցուցակված Ընկերության ընդհանուր քանակով 172,886,525 (մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր քսանհինգ) հատ սովորական անվանական բաժնետոմսեր, որոնց շնորհված է դիտարկման ենթակա կարգավիճակ:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մարտի 10-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Տիգրան Մեծի Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am